



## Լիբանանեան Լուրեր

### Նախագահի Լիազօրութիւնները Կ'աւարտի՞ն Իրենց Ժամանակին...



Լիբանանի քաղաքական իրավիճակը օր օրին կը վատանայ, բան մը, որ սկսած է սպառնալ յառաջիկային տեղի ունենալիք բոլոր ընտրութիւններուն, որոնց շարքին նաեւ խորհրդարանական ընտրութիւններու կայացումին: Կառավարական, տնտեսական և դատաիրաւական համակարգին դիմակալած ճգնաժամին ուղեկցող, մէկը միւսին ետեւէն փլուզող հաստատութիւններով յի երկրի պայմաններուն մէջ, նախագահ Միշէլ Աունի խօսքերէն ի յայտ եկաւ, որ ան չի յանձնէր նախագահութիւնը եթէ յաջորդ մը չունենայ: Այս նշումը դուռ բացաւ նախագահին մտադրութեան վերաբերեալ վերլուծութիւններու, յատկապէս. քանի որ այս մասին տեղեկատուութիւն արտահոսած էր ամիսներ առաջ:

Ըստ նշեալ տեղեկութիւններուն, Պաապտայի պալատին մէջ կը պատրաստուի սահմանադրութիւնը ուսումնասիրող աշխատանք, անոր մէջ ճեղք մը գտնելու, որ թոյլ կու տայ նախագահին մնալու իր պաշտօնին վրայ, եթէ իրաւայաջորդ մը չընտրուի:

## Միջազգային Լուրեր

### Տաւշի 2-րդ Մարդը Ծուղակ Ինկած Է

Վերջերս ձերբակալուած Է Տաւշ կազմակերպութեան կարեւոր ղեմքերէն՝ Սամի Ալ ժապուրի, որ եղած էր 2019-ին սպաննուած առաջնորդ՝ Ապու Պաքրի Ալ Պաղտատիի փոխանորդը: Այս մասին ըստ «Արեւելք»-ին կը հաղորդէ «Ալ Մայատին» կայքէն:

Աղբիւրը նշած է թէ Իրաքի բարձրագոյն դատարանը յայտարարութիւն տարածած է, ուր յիշած է թէ Իրաքի գաղտնի սպասարկութիւնը ի վերջոյ արտասահմանի մէջ ձերբակալած է «Տաւշ» կազմակերպութեան հիմնական ղեմքերէն Հաճի Համետը, եւ փոխադրած զինք՝ Իրաք:

Ըստ նոյն յայտարարութեան Հաճի Համետի իսկական անունը Սամի Ալ ժապուրի է: Ան ծնած է Իրաքի Ալ Շարքաթ գիւղը 1974-ին: 2004-ին անդամակցած է «Միացումի եւ ճիշատի շարժում» կոչուած խմբաւորումին, եւ այդ թուականէն ի վեր վարած է ահաբեկչական գործունէութիւն զանազան խմբաւորումներու մէջ:

Աղբիւրը նաեւ նշած է, թէ Իրաքի Բարձրագոյն դատարանը ներկայացուցած է Հաճի Համետի խոստովանութիւնները, որ ան ըրած է ինքնակամօրէն:



## Հայկական Լուրեր

### Մեթրոյի Անցքերուն Բողոքի Արարքներ

Ոստիկանները երեկ՝ Նոյեմբեր 24-ին, Երեւանի մեթրոյի «Երիտասարդական» կայարանին մօտէն բերման ենթարկած են 2 քաղաքային:

«Քաղաքացիները բերման են ենթարկուել «Վարչական իրաւախախտումների վերաբերեալ» օրէնսգրքի 182-րդ յօդուածի հիմքով՝ ոստիկանութեան ծառայողի օրինական պահանջը չկատարելը», յայտնեցին ոստիկանութենէն:

Նշենք, որ «Ազատագրական շարժում» նախաձեռնութեան անդամները երեկ՝ Նոյեմբեր 24-ի առաւօտեան կաթուածահար ըրած են Երեւանի մեթրոփոլիթէնի աշխատանքը: Անոնք մեթրոյին մէջ ներկայացուցած են իրենց պահանջները եւ յայտարարած, որ նահանջ պիտի չըլլայ: «Ապաքաղաքական բողոքի ակցիա է: Բողոքի ակցիան նաև ձեր երեխաների անվտանգութեան համար է, զինուորին պետք է զինեն, առաջնագիծը պետք է պաշտպանել: Ժամը 18:30-ին բոլորով միասնական հաւաքունքը Հանրապետության հրապարակում, ամեն օր պետք է պայքարենք, նահանջ չի լինելու: Մեր նպատակն է թոյլ չտալ թշնամուն միջանցք տրամադրել, կանխել սահմանազան եւ սահմանազանում հակահայկական ծրագիրը, այդ թւում՝ պահանջելով հրապարակել ստորագրման ներկայացուած փաստաթղթերը», ըսած են շարժումին մասնակիցները:

Աւելի ուշ ոստիկանները մեթրոյի «Երիտասարդական» կայարանին մօտէն բերման ենթարկեցին «Ազատագրական շարժում» նախաձեռնութեան անդամներէն քանի մը հոգի:



## Եռակողմ Գագաթը 26 Նոյեմբերին

Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փութինի, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի եռակողմ բանակցութիւնները պիտի կայանան Նոյեմբեր 26-ին, Սոչիի մէջ:

Կը նշուի, որ ՌԴ նախագահ Վլատիմիր Փութինը, բացի եռակողմ բանակցութիւններէն, առանձին բանակցութիւններ պիտի կատարէ Ատրպէյճանի նախագահին եւ Հայաստանի վարչապետին հետ:

Փութինը, Փաշինեանը եւ Ալիեւը պիտի ուրուագծեն Ղարաբաղի մէջ կայունութեան ամրապնդման եւ խաղաղ կեանքի հաստատման հետագայ քայլերը: «Կը նախատեսուի քննարկել երեք երկիրներու ղեկավարներու պայմանաւորութիւններու կատարման ընթացքը, որոնք ձեռք բերուած էին 2020 թուականի Նոյեմբեր 9-ին եւ 2021 թուականի Յունուար 11-ին, ինչպէս նաեւ պիտի ուրուագծուին Ղարաբաղի մէջ կայունութեան ամրապնդման եւ խաղաղ կեանքի հաստատման հետագայ քայլերը: Առանձնապատուկ ուշադրութիւն պիտի յատկացուի առեւտրատնտեսական եւ ճանապարհային կապերու վերականգնման եւ զարգացման հարցերուն», ըսուած է հաղորդագրութեան մէջ:



**ՊԱՏԳԱՍ**

**Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին Պատգամը  
Հայաստանի Համահայկական Հիմնադրամի  
24-րդ Հեռուստամարաթոնին Առիթով  
(25 Նոյեմբեր 2021)**



Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն Հայրապետական օրհնութեամբ ու քրիստոնէական ջերմ սիրով կ'ողջունենք մեր ժողովուրդի սիրելի զաւակները: Հինգշաբթի Նոյեմբեր 25-ին տեղի պիտի ունենայ Հայաստանի Համահայկական Հիմնադրամի 24-րդ հեռուստամարաթոնը: Արդարեւ, Հայաստանի Համահայկական Հիմնադրամը իւրաքանչիւր հայու եւ ամբողջ հայութեան հիմնադրամն է: Ան Հայաստանի ու Արցախի հզօրացման ի խնդիր գործող հիմնադրամ է. այլ խօսքով՝ ողջ հայութեան առաւել հզօրացման ու առաւել ծաղկման հիմնադրամ. որովհետեւ, ինչպէս յաճախ կարեւորութեամբ կը շեշտենք, Հայաստանի հզօրացումը մեր ազգին հզօրացումն է, եւ՝ փոխադարձաբար: Այս գիտակցութեամբ ու նախանձախնդրութեամբ իւրաքանչիւր հայ իր ներդրումը կոչուած է բերել Հայաստանի Համահայկական Հիմնադրամի հանգանակութեան՝ զօրավիգ կանգնելով անոր նախաձեռնած բոլոր հայաշէն ու հայրենակերտ ծրագիրներուն:

Ներկայ հեռուստամարաթոնը տեղի պիտի ունենայ **«Կենսունակ Սահմանային Համայնքներ»** խորագիրին ներքեւ: Հաւաքուած գումարներով պիտի իրագործուին այնպիսի ծրագիրներ, որոնց նպատակը Հայաստանի ու Արցախի սահմաններուն մօտ ապրող համայնքներուն առաւել կազմակերպումն ու բարգաւաճումն է: Արդարեւ, սովորական ծրագիր մը չէ սա. անոր հիմնական նպատակը սահմանային համայնքներու ամրացումն ու պաշտպանութիւնն է՝ ի խնդիր Հայաստանի անվտանգութեան առաւել ամրապնդման: Հետեւաբար, ռազմավարական նշանակութիւն ունի նման ծրագիրներու իրագործումը՝ ընկերատնտեսական զարգացման առընթեր:

Այս առիթով, Մեր բարձր գնահատանքը կ'ուզենք յայտնել Հայաստանի Համահայկական Հիմնադրամին, որ անցնող տարուան ընթացքին իր յատկացուցած գումարներով կարելորդ նպաստ բերաւ մեր վիրաւոր զինուորներու բուժման, արցախցիներու յատուկ բնակարաններու շինութեան, համայնքներու կրթական ու տնտեսական կեանքի ծաղկման եւ յարակից այլ ծրագիրներու, ինչպէս նաեւ ընկերատնտեսական տագնապի մէջ գտնուող Լիբանանի հայութեան: Վստահ ենք, որ նման ծրագիրներ առաջնահերթութեան կարգով պիտի շարունակեն միշտ յատուկ տեղ գրաւել Հայաստանի Համահայկական Հիմնադրամի առաքելութեան ծիրէն ներս:

Հետեւաբար, անգամ մը եւս կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդի աշխարհացրիւ զաւակներուն. գործնապէս մասնակից դառնալու բազմաթիւ ու բազմազան տագնապներու ու մարտահրաւերներու դիմաց գտնուող մեր հայրենիքին՝ Հայաստանի ու Արցախի անկախութեան, անվտանգութեան ու գերիշխանութեան նպաստող ծրագիրներու իրագործման:

Թող Աստուած պահէ ու պահպանէ Հայաստանը, Արցախը եւ Սփիւռքը եւ մեր ժողովուրդին կեանքը լեցնէ երկնային բարիքներով:

Աղօթարար՝  
**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ**  
**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**



**Պատմութեան  
Մէջ Այսօր**

**Մոնթե Մելքոնեան**

Մոնթե Զարլզ Մելքոնեան (25 Նոյեմբեր 1957, Վիսելիա, Զալֆորնիա, Ամերիկայի Միացեալ Նահանգներ - 12 Յունիս 1993, Մարզիլի, Ադուամի շրջան, Ազրայէճանի Հանրապետութիւն), արցախեան պատերազմի հայազգի հրամանատար:

Մոնթե ծնած է 25 Նոյեմբերին, ԱՄՆ-ի Զալֆորնիոյ Նահանգի, Ֆրեզնօ քաղաքէն ոչ հեռու՝ Վիսելիա ավանին մէջ:

1972-ի ամրան տասնհինգամեայ Մոնթե Մելքոնեան կ'աւարտէ տեղի միջնակարգ դպրոցը: 1973-ին՝ միւս Նոր ուսումնական տարեշրջանին վերամուտը, դպրոցի տնօրէն «Տէլփոտ Գրէյմս» կ'առաջարկէ տաղանդաւոր աշակերտին ճամբորդել Ճափոն՝ ուսանելու:

Արտասովոր ընդունակութիւններու տէր, 12 տարեկանէն (այդ տարիքին է, որ ան տեղեկացած է իր հայ ըլլալուն մասին) ծնողներուն հետ 15 ամեայ տղան ճամբորդութիւններ կը կատարէ դէպի Եւրոպայի, Ափրիկէի եւ Մերձաւոր Արեւելքի 41 քաղաքներ: Կ'երթայ Արեւմտեան Հայաստան՝ իր պապերուն տունը: Կ'ուսումնասիրէ 1915-ի Մեծ Եղեռնի պատմութիւնը:

1975-ին՝ գերազանց գնահատականով կ'աւարտէ «Մաունթ Ուիլիսի»-ի միջնակարգ դպրոցը: 20 տարեկանին կ'ընդունուի Զալֆորնիոյ Պրըքլիի համալսարանը: Բացարձակ ընդունակութիւններու տէր՝ ան չորս տարուան դասընթացքը կ'աւարտէ կրկնակի տիտղոսով՝ ստանալով հնագիտութեան եւ ասիական պատմութեան մասնագետի վկայականներ: Համալսարանն ուսանած տարիներուն կը հիմնէ «Հայ ուսանողական միութիւն»ը եւ կը կազմակերպէ ցուցահանդէս մը՝ նուիրուած Մեծ Եղեռնին:

Մոնթե իր աւարտաճառը կը նուիրէ Վանի թագաւորութեան, ժայռափոր դամբարաններու ուսումնասիրութեան եւ կը պաշտպանէ զայն 1978-ին: Կ'արժանանայ կրթաթոշակի՝ Օքսֆորտ համալսարանի դոկտորականը պաշտպանելուն համար: Սակայն Մոնթե Անգլիոյ փոխարէն կ'երթայ Արեւմտեան Հայաստան՝ Վասպուրականի ժայռափոր դամբարանները եւ կացարանները



չափագրելու եւ ուսումնասիրելու համար:

1978-ի աշնան կը մեկնի Իրան, ապա Լիբանան՝ մասնակցելու Պէյրութի հայ համայնքի ինքնապաշտպանութեան մարտերուն: 22 տարեկանին արդէն լիովին կը տիրապետէ անգլերէն, ֆրանսերէն, սպաներէն, իտալերէն, թրքերէն, պարսկերէն, ճաբոներէն եւ քրտերէն լեզուներուն:

1980-ին կը միանայ «Հայաստանի Ազատագրական Հայ Գաղտնի Բանակին»: Նոյեմբեր 1981-ին Փարիզի մէջ կը ձերբակալուի՝ Հռոմի մէջ թուրք դիւանագետին սպաննութիւնը նախապատրաստելուն ամբաստանութեամբ, որուն ժխտումէն ետք, այնուամենայնիւ, կը բանտարկուի կեղծ անձնագիր կրելուն մեղադրանքով: Զանի մը շաբաթէն ազատ կ'արձակուի: Երկու տարուան ընթացքին կը դառնայ վերոյիշեալ կազմակերպութեան կարելորդ դէմքը: Յօդուածներով հանդէս կու գայ Փարիզի «Հայ Պայքար» եւ Լոնտոնի «Կայծեր» թերթերուն մէջ, Սան Ֆրանսիսքոյի «Սարդարապատ» ամսագիրին, նաեւ անգլերէն շարք մը գիրքերուն մէջ՝ հայոց ազգային հարցերու արդարացի պահանջքին եւ իրաւունքին մասին, որոնք լոյս տեսած են Լոնտոնի մէջ:

1991-ին, բանտէն ազատ արձակուելէն ետք, Մոնթե կ'անցնի Երեւան, եօթ ամիս կ'աշխատի գիտութիւններու ակադեմիոյ մէջ՝ «Հայաստանը եւ Հարեւանները» գիրքը գրելու եւ հրատարակելու նպատակով:

Օգոստոսին կ'ամուսնանայ լիբանանահայ ուսանողուհի՝ Սեդային հետ, որուն հետ ծանօթացեր էր Լիբանան գտնուած ընթացքին: Արցախի ազատագրման պատերազմը սկսելէ ետք, ձգելով գիտական գործունեութիւնը, կը մեկնի Ղարաբաղ՝ մարտական գործողութիւններուն մասնակցելու համար:

**Շար. Էջ 07**

## Արհիպատիւ Գերերջանիկ Տէր Ռաֆայէլ-Պետրոս 21-րդ Պատրիարք-Կաթողիկոսի Ընտրութեան Առիթով

**Դոկտ. ՉԱԷՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ**

### Ռաֆայէլ-Պետրոս 21-րդ Հայ Կաթողիկէ Նորընտիր Պատրիարքը

Հայ Կաթողիկէ Արհիպատիւ ԳՐԻԳՈՐ-ՊԵՏՐՈՍ 20-րդ ԿԱՊՐՈՅԵԱՆ Պատրիարք-Կաթողիկոսի վախճանումէն ետք, Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան սիւնհոդոսական ութ եպիսկոպոսներ Յռոմի մէջ ներկայ տարոյս սեպտեմբեր 23-ին ընտրեցին Հայաստանի, Վրաստանի եւ արեւելեան Եւրոպայի Կաթողիկէ համայնքներու թեմակալ Առաջնորդ Արհիպատիւ Ռաֆայէլ Եպիսկոպոս Սինասեանը յաջորդ Պատրիարք-Կաթողիկոս Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ:

Սրբազան Ըստիանայապետ Ֆրանսիսկոս Պապի հաստատումէն ետք ընտրեալը ստացաւ ՌԱՖԱՅԷԼ-ՊԵՏՐՈՍ 21-րդ Կաթողիկոս-Պատրիարք անունը, որուն գահակալութիւնը տեղի ունեցաւ Կիրակի 2021 թուի հոկտեմբեր 24-ին, Պատրիարքութեան եօթ եպիսկոպոսներու ձեռնադրութեամբ Պէրոլի Ս. Եղիա Աթոռանիստ Մայր Եկեղեցոյ մէջ յընթացս Ս. Պատարագի:

Նորընտիր Յոգեւոր Տէրը բազմապատասկ հոգեւորականի իր բարի անունն ու դիրքը կը վայելէր Կաթողիկէ համայնքէն ներս, յատկապէս Գալիֆորնիոյ Կլէնտէյլ քաղաքի Նորակառոյց եւ հայադրոշմ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Եկեղեցւոյ կառուցման հոգեշէն աշխատանքին մէջ որպէս Յոգեւոր Հովիւը Հայ Կաթողիկէ համայնքին: Այսօր Նոյն եկեղեցին կը հանդիսանայ իրենց առաջնորդանիստ աթոռը Գերապայծառ Միքայէլ Եպիսկոպոս Մուրատեանի առաջնորդութեամբ Ամերիկեան ցամաքամասի տարածքին՝ փոխան Նիւ Եորքի ուրկէ փոխադրեցին զայն հաւատացեալներու աւելի մեծ թիւով ներկայութեան հետեւանքով:

1991-ին Յռոմի Յովհաննէս-Պօղոս Բ. Պապի որոշումով կազմաւորուեցաւ Հայաստանի, Վրաստանի եւ Արեւելեան Եւրոպայի հայ կաթողիկէ թեմը՝ կեդրոն ունենալով Կիւմրին, հաւանութեամբն ու գիտութեամբը Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսին: Ինչպէս նշուեցաւ իր Կաթողիկոս-Պատրիարք ընտրուելէն առաջ Ռաֆայէլ Գերապայծառ Սինասեան Յռոմի Պապէն նշանակուած էր թեմակալ Հայաստանի եւ Արեւելեան Եւրոպայի հայ կաթողիկէ համայնքներուն:

### Պատմական Ակնարկ

Ներկայ յօդուածը ուսանելի կրնայ ըլլալ ընթերցողներուն առ հասարակ որ կը պարփակէ անցնող Հայ Կաթողիկէ Պատրիարք-Կաթողիկոսներու 150-ամեայ շատ համառօտ ակնարկը՝ Ցեղասպանութեան Հարիւրամեակի ծիրէն ներս: Նշենք որ բոլոր Պատրիարքները ՊԵՏՐՈՍ անունը կը կցեն իրենց անունին հպատակելով Յռոմի Եկեղեցիին, եւ համարով մըն ալ կը հաստատեն իրենց շարունակականութիւնը՝ սկսեալ Աբրահամ-Պետրոս Արծիւեան Եպիսկոպոսէն որ եղաւ առաջինը 1742 թուին: Նորընտիր Պատրիարք-Կաթողիկոսը կ'ըլլայ ուրեմն 21-րդը: Թուահամարը ինքնին կը հաստատէ Հայ Կաթողիկէ Պատրիարքներուն թիւն ու թուականն ալ՝ պատրիարքութեան տարիքը, որմէ առաջ գոյութիւն չունէին Աթոռն ու Պատրիարքը, եթէ Նոյնիսկ կային հռոմէադաւան հայեր Կիլիկեան թագաւորութենէն մնացած:

Ուրեմն հարց պիտի ծագի թէ ե՞րբ, ինչո՞ւ, եւ ի՞նչպէս ծնունդ առաւ Հայ Կաթողիկէ Պատրիարքութիւնը: Մօտաւոր անցեալի պատմական տուեալներով յիշեալ Աբրահամ Եպիսկոպոս Արծիւեան որ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Կիլիկեան Աթոռին ենթակայ եպիսկոպոսն էր Հալէպի մէջ, կը լքէ Հայաստանեայց Եկեղեցին միանալու համար Յռոմին: Դիմելու համար Յռոմի Ըստիանայապետ Պենտիկտ ԺԴ-ին առնուազն երեք եպիսկոպոսներ պէտք է ներկայանային միասին, եւ Արծիւեան երկու քահանաներ անկանոն կարգով եպիսկոպոս կը ձեռնադրէ, որոնք իրենց կարգին զինք պատրիարք կը ձեռնադրեն:

1742 թուականին դիմելով օրուան Յռոմի Պապին կը ստանան Արծիւեանի Պատրիարքութեան հաւանութիւնը, միայն «պատրիարք»-ի տիտղոսով եւ ոչ թէ կաթողիկոս Կիլիկիոյ, որոնք պապական որոշումներ չեն այլ միայն իրենց հայ կաթողիկէներուն յաւելումները հայկական ըլլալու միտումով ու ձգտումով: Իրենց համար կարեւոր էր Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռին համագոր դիրք մը ստեղծել եւ օգտագործել: Աւելի ուշ Աղաճանեան



Պատրիարք աւելի անվաւեր, յերկրածոյ եւ շփոթեցուցիչ՝ «Պատրիարք Տանն Կիլիկիոյ եւ Կաթողիկոս Հայոց Ուղղափառաց» տիտղոս մըն ալ իւրացուց, դիտումնաւոր կերպով հակադրուելու համար Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դարաւոր գոյութեան՝ Կիլիկիոյ եւ ապա Լիբանանի մէջ: Իր յաջորդները անտեսեցին նման տիտղոսները:

### Պօղոս-Պետրոս ԺԳ Թերզեան Պատրիարք

Երբ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարք Մաղաքիա Արք. Օրմանեան 1908 թուին կը հրաժարէր իր պաշտօնէն, իր 12 տարուան պատկառելի պատրիարքութեան ընթացքին Հայ Կաթողիկէ երեք պատրիարքներ կարճ գահակալութեամբ իրար յաջորդեցին աննշան հետքեր ձգելով՝ Օրմանեանի ազդեցիկ գործունեութեան ներքեւ:

1899 թուին Հայ Կաթողիկէներու Ստեփաննոս-Պետրոս 10-րդ Ազարեան Պատրիարքը կը վախճանէր, եւ իր յաջորդն ալ Պօղոս Էմմանուէլեան, որպէս Պօղոս-Պետրոս 11-րդ կը վախճանէր 1904 թուին: Յաջորդաբար կը վախճանէր Նաեւ Պօղոս-Պետրոս 12-րդ Սապայաղեան Պատրիարքը 1909 թուին, բոլորն ալ Կ. Պոլսոյ մէջ, եւ Թերզեան գերապայծառը կը յաջորդէր որպէս Պօղոս-Պետրոս 13-րդ Պատրիարք Հայ Յռոմէականաց: Թերզեան չէ կրցած ժողովրդականութիւն շահիլ իր կղերապետական խիստ եւ բռնի ձգտումներուն պատճառաւ, իր դէմ հանելով պատրիարքութեան աշխարհական երես-փոխանները, որոնք չեն հաւանած իր ընթացքը քանի որ մերժած է յարգել սահմանադրական օրինաւոր դրութիւնը եւ երկար ատեն բացակայած իր Աթոռէն:

Թերզեան Պատրիարքի ընթացքը աննպաստ եղած է Նոյնիսկ հայ կաթողիկէներուն երբ ան գրած է երկու պարսաւագիրներ Կ. Պոլսոյ Կաթողիկէ պատգամաւորներուն դէմ որոնք «միաձայնութեամբ մերժած են ընդունիլ զանոնք քանի որ այդ գիրերը հասարակութեան իրաւունքներու ժխտումն էին եւ ամենաճանր հետեւանքներու կ'առաջնորդէին մօտ 60,000-ի հասնող հայ կաթողիկէները», ինչպէս կը կարդանք 1911 թուականի, Տաճարեւան ամսագրին մէջ:

### Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը

Մաղաքիա Օրմանեան Պատրիարքին երկրորդ անգամ կը յաջորդէր իր նախորդը՝ Մատթէոս Նախկին Պատրիարք Իզմիրլեանը, որ սակայն մի քանի ամիս ետք Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուելով 1909-ին Էջմիածին կը մեկնէր: Իր յաջորդն ալ Եղիշէ Պատրիարք Դուրեան կարճ ատեն մը պատրիարքութիւնը վարեց աննշան արդիւնքով, որուն յաջորդեցին Յովհաննէս Արշարունի եւ Չաւէն Տէր Եղիայեան պատրիարքները, երկուքն ալ աւելի տոկոսն էւ մնայուն արդիւնքներով մինչեւ 1922 հակառակ քաղաքական խիստ աննպաստ պայմաններուն:

Հայ կաթողիկէներ կը մնային անտէր երբ իրենց Թերզեան Պօղոս-Պետրոս 13-րդ Պատրիարքը դեռ չէր վերադառնար Կ. Պոլիս, եւ աւելին, ցուրտ եւ այլամերժ յարաբերութիւն կը պահէր Գում Գաբուի Հայոց Պատրիարքութեան հետ՝ «անպատշաճ բառեր գործածելով Հայ Եկեղեցւոյ մասին իրենց ընդհանուր ժողովներուն մէջ», ինչպէս կը կարդանք Նոյն «Տաճար» ամսագրին մէջ (1911, էջ 296):

Շար. էջ 06

**Սփիւռքահայ Կեանք**

**Պոլսոյ «Գալֆաեան Տան» Հիմնադրութեան 155-րդ Տարեդարձը**

«Գալֆաեան Տան» հիմնադրութեան 155-րդ տարեդարձը 21 Նոյեմբերին, աւանդական ձեւով նշուեցաւ պոլսահայ համայնքին մէջ: Թուրքիոյ Հայոց պատրիարք Սահակ արք. Մաշալեան նախագահեց այս առթիւ Գումգաբուի Ս. Աստուածածին Աթոռանիստ Մայր եկեղեցւոյ արարողութեան: Հաստատութեան հիմնադրութեան տարեդարձին զուգահեռ ոգեկոչուեցան նաեւ Գալֆաեան ուխտի հիմնադիրը եւ անդարձ բաժնուած բոլոր անդամուհիները: Այս մասին կը տեղեկանանք «Ժամանակ»-էն: Պատրիարք հօր հանդիսապետութեամբ, Մայր եկեղեցւոյ մէջ պատարագեց եղիշէ վրդ. Ուչքունեան: Երգեցողութիւնները կատարուեցան «Գողթան» դպրաց դաս-երգչախումբին կողմէ՝ ղեկավարութեամբ Յովսէփ

Գույումճեանի: Ներկայ էր նաեւ Գալֆաեան ուխտէն քոյր Գայիանէ Տուքատիրեան: Օրուան պատգամին մէջ, պատրիարք հայրը կանգ առաւ ողորմութեան կարեւորութեան վրայ, ապա ընդգծեց «Գալֆաեան Տան» յարատեւութեան կարեւորութիւնը: «Հոգեւոյս սրբուհի մայրապետ Գալֆաեանի կողմէ հիմնուած այս հաստատութիւնը կը մարմնաւորէ կարեւոր արժէք մը, որ պէտք է ըլլայ շարունակական», նշեց պատրիարքը, որ նաեւ գնահատեց ատենապետուհի Տիանա Գամփարոսեանի կողմէ գլխաւորուած խնամակալութիւնը եւ տնօրէնուհի Թամար Ներկիզը: «Գալֆաեան Տան» խնամակալներուն առջնութիւնը, արարողութիւններուն ներկայ գտնուեցան Ս. Խաչ դպրեւանքի խնամակալութեան ատենապետ փրոֆ. Թորոս Ալճան



Եւ Աթոռանիստ Մայր եկեղեցւոյ թաղային խորհուրդի ատենապետ Հրանդ Մոսկոֆեան: Համաճարակին պատճառով սիրոյ սեղան չսարքուեցաւ եւ աւանդական մատաղի միսը բաժնուեցաւ բոլորին:

Մինչ այդ, Նուիրահաւաքի արդիւնքը բաւարար չեղաւ խնամակալութեան կողմէ յայտարարուած պիւտճէի բացը հաւասարակշռելու համար: Ակնկալուած գումարին միայն երկու երրորդը հանգանակուեցաւ:

**Պատմամշակութային Արձագանգ**

**Մշոյ Սուրբ Առաքելոց Վանքը Վերականգնելու Կոչ Ուղղուած Է**

Այժմեան Թուրքիոյ Հանրապետութեան սահմաններուն մէջ գտնուող հայկական Մշոյ Սուրբ Առաքելոց այցելած շարք մը քաղաքացիներ, որոնց մէջ եղած է նաեւ «1071 Ալփարսլան» միութեան նախագահ Թուրկայ Օզլին, տեղւոյն իշխանութիւններուն կոչ ուղղած են վերականգնելու Մշոյ Սուրբ Առաքելոց կիսաւեր վանքը: Այդ մասին կը հաղորդէ Akunq.net-ը՝ վկայակոչելով «Անատոլի» թրքական լրատուական գործակալութեան հրապարակումը: Ըստ աղբիւրին՝ թուրք քաղաքացիները շրջած են գանձագողերու կողմէն աւերուած հայկական եկեղեցւոյ մէջ եւ փափաքած են, որ պատմական յուշարձանը վերա-



նորոգուի՝ տուեալ շրջանի զբօսաշրջութիւնը զարգացնելու նկատառումով: «1071 Ալփարսլան» միութեան նախագահը գործակալութեան թղթակիցի հետ գրոյցին յատկապէս

յայտնած է. «Իբրեւ քաղաքացիական հասարակական կազմակերպութիւն՝ առիթ ունեցանք այցելելու այս վայրը, ուր ուսումնասիրութիւններ կատարեցինք: Եկեղեցին ներկայիս աւերակ վիճակի մէջ է, որուն հիմնական պատճառը գանձ որոնողներու եւ անգիտակից մարդոց վերաբերմունքն է: Կը խնդրենք, որ նմանատիպ տեսարժան վայրերը վերանորոգուին՝ զարկ տալու համար զբօսաշրջութեան զարգացման»: Թրքական պետական գործակալութիւնը, բնականաբար, չէ նշած վանքին հայկական ըլլալու փաստը: Յիշենք, որ Մշոյ Սուրբ Առաքելոց վանքը, որ ներկայիս կը գտնուի Մուշ Նահանգի կեդրոնին ենթակայ Զեպենք (Արաք) գիւղին մէջ,

հիմնուած է 4-րդ դարուն Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի կողմէն: Մշոյ Սուրբ Առաքելոցը նախքան 1915 Հայոց Ցեղասպանութիւնը տուեալ շրջանի ամենանշանաւոր սրբավայրերէն մէկն էր: Վանքը 1960-ին պայթուցիկով կորուստի մատնուած է Մշոյ Նահանգապետարանի կողմէն, որուն հետեւանքով այս վանական համալիրէն մեր օրերը հասած են միայն 2 եկեղեցի: Վանքը վերանորոգուած է 1125-ին: Վանքի արեւելեան կողմը 9 խաչքար կար: 1915-ի Հայոց Ցեղասպանութեան ժամանակ թուրքերը յարձակած են վանքին վրայ եւ սպանած են եկեղեցւոյ վերջին սպասաւոր Յովհաննէս Վարդապետ Մուրատեանը: **Թարգմանեց՝ Մելինէ Անումեան**

**Առողջապահական**

**Անվտանգ Հեռաւորութիւնը Համակարգիչի «Մոնիթոր»-էն Մինչեւ Աչքերը**

Տեսողութիւնը չվնասելու համար ակնաբոյժ Սերկէյ Խոմեաքով կը յանձնարարէ «Էքրան»-էն հեռու մնալ 50-60 ամսթիմերը: Մասնագետը կը յանձնարարէ «մոնիթոր»ը տեղադրել անմիջապէս անհատին դիմացը, մինչդեռ ատոր վերին եզրը պէտք է ըլլայ տեսադաշտի մակարդակին վրայ: Ան յանձնարարած է պահել 50-60 ամսթիմերը, սակայն հեռաւորութիւնը կրնայ տարբերիլ՝ կախեալ

ըլլալով սարքի անկիւնագիծէն: «Եթէ դուք կ'աշխատիք 25-30 ամսթիմեր «Էքրան»ի անկիւնագիծով «նօթպուք»ի կամ «թապլէթ»ի հետ, ապա հեռաւորութիւնը կրնայ հաւասար ըլլալ «հարմոն»ի հեռաւորութեան. այս արմուկէն մինչեւ բութ մատնաչափ հեռաւորութիւնն է կամ միջինը 40-45 ամսթիմեր», - ըսած է մասնագետը: Կարեւոր է նաեւ ուշադրութիւն դարձնել համակարգիչով աշխա-



տելու համար տարածքի լուսաւորութեան մակարդակին: Ըստ Խոմեաքովի՝ ամենէն արդիւնաւետ եւ հանգստաւետ լոյսի աղբիւրները

այն աղբիւրներն են, որոնք արտաճառուող լոյսի «սփեքթրմ»ին մէջ մօտ են բնական «սփեքթրմ»ի լուսաւոր հոսքին: Ինչ կը վերաբերի արուեստական լոյսի աղբիւրներուն, ապա «ինտաքշն» լամպերը կը բաւարարեն այդ չափանիշները, ինչպէս նաեւ շիկացած լամպերը եւ որոշ ժամանակակից լուսատիոտային լամպերը:

**Շնորհակալ Նախաձեռնություն**

## Հայաստան Հիմնադրամի Թելեթոնը Օգնություն Պիտի Տրամադրե Պատերազմեն Տուժած Համայնքներուն

Հայաստան Հիմնադրամի Գոհաբանության Օրուան 24-րդ տարեկան միջազգային թելեթոնը տեղի պիտի ունենայ 25 Նոյեմբերին, կեսօրէն ետք ժամը 4-էն մինչեւ 8 (Արեւելեան ափի ժամով՝ երեկոյեան 7-11): Դրամահաւաքին հասոյթը պիտի տրամադրուի 44-օրեայ պատերազմէն տուժած Արցախի եւ Հայաստանի բնակչութեան, ներառեալ՝ տասնեակներով աւերուած համայնքներու, ինչպէս նաեւ շուրջ 100,000 տեղահանուածներու ու բռնազաղթուածներու կեանքերու վերականգնման:

«Վերակառուցել հայրենիքի հեռաւոր համայնքները» նշանաբանով, այս տարուան թելեթոնը պիտի ընդլայնէ անցեալ 12 ամիսներուն կատարուած աշխատանքը՝ համապարփակ նեցուկ ապահովելով պատերազմէն

վնասուած Արցախի ու Հայաստանի բնակչութիւններուն համար: Սոյն աջակցութիւնը պիտի ընդգրկէ մարդասիրական հրատապ օգնութիւն, բնակարաններու կառուցում, բժշկական բազմատեսակ օժանդակութիւն, ենթակառոցներու նորոգում եւ զարգացում, ներառեալ ճամբաներու նորոգում ու մշակութային վերականգնումի ծրագիրներ, ներառեալ՝ տեղահանուած համայնքներու համար դպրոցաշինութիւն եւ արուեստներու դասաւանդում:

«Թելեթոն 2021-ը կը վերաբերի Նոյնքան կազմակերպչական հաշուետուութեան ու թափանցիկութեան, որքան Արցախի ու Հայաստանի ժողովուրդի վերականգնման», յայտնեց հիմնադրամի հոգաբարձութեան ատենապետ

Մարիա Մեիրանեան: «Այսպէս, ցարդ իրականացուած ծրագիրներու մասին մեր Նուիրատուները ամբողջական կերպով տեղեակ պահելու զուգահեռ, Թելեթոն 2021-ը հրատապ օգնութիւն պիտի ապահովէ՝ պատերազմին պատճառով աւերուած համայնքներու եւ տուն-ու-տեղ կորսնցուցած ընտանիքներու համար»:

Թելեթոնը ուղղակիօրէն պիտի հեռարձակուի Armeniafund.org կայքէջէն՝ համաշխարհային հանդիսատեսներու համար, եւ Նոյն ժամանակ պիտի սփռուի Հարաւային Զալֆորնիոյ տարածքին, պատկերասփիւռի հետեւեալ կայաններէն՝ AABC TV, ARTN TV, Horizon Armenian TV, եւ USArmenia TV:

Թելեթոնի կամաւորներուն, հաղորդավարներուն եւ անձնակազմին ապահովութեան համար, COVID-



19-ի վերաբերող բոլոր կանոնները պիտի գործադրուին միջոցառման ընթացքին, եւ դրամահաւաքի հեռաձայնները պատասխանող կամաւորներու կազմը պիտի գործէ տարբեր վայրէ մը՝ դարձեալ ապահովական նկատառումներով: Հայաստան հիմնադրամը 501(c)(3) կարգավիճակ ունեցող ոչ-հասութաբեր, ոչ-կառավարական, եւ ոչ-քաղաքական մարդասիրական կազմակերպութիւն մըն է:

**(Հաղորդագրութիւնը՝ հիմնադրամէն)**

## ՀԲԸՄի GenNext Ծրագիրը

Իրականացման 24րդ տարում, ՀԲԸՄի մեծ յաջողութեամբ պսակուած Generation Next (GenNext) Mentorships ծրագիրը առաջ է ընթանում այս փոփոխական ժամանակներում՝ ծառայելով Մեծ Լոս Անջելէսի եւ Գլենդէյի հայ երիտասարդութեանը: Նախաձեռնութիւնը վերջերս յայտարարել է իր սկզբնական ծրագրի ընդլայնուած տարբերակի մասին եւ խոստումնալից դեռահասների եւ կամաւոր մենթորներին (խորհրդատուներուն) հրաւիրում է անյապաղ դիմել այս անվճար եւ մշտապէս զարգացող ծրագրին:

Առնուազն մէկ տարի շարունակ սովորողները իւրաքանչիւր ամիս ուր ժամ կը յատկացնեն ծրագրին եւ կը մասնակցեն շաբաթական առերես մենթորային հանդիպումների եւ կ'օգտուեն ամենամտեայ խմբային միջոցառումների նոր հնարաւորութիւններին:

Նոր եւ բարելաւուած ծրագրի շրջանակներում յաւելուել է հիմնաւոր խմբային միջոցառումների բաղադրիչ՝ ի լրումն դեռահասների եւ հոգածու կամաւորների միջեւ բովանդակալից փոխյարաբերութիւնների: Այս առերես շփումները ձեւաւորման ամենաբուռն փուլում գտնուող երիտասարդներին թոյլ են տալիս ստանալ անհատական աջակցութիւն, ծնողների համաձայնութեամբ, ինչպէս նաեւ ՀԲԸՄի Արեւմտեան շրջանային յանձնաժողովի եւ մասնագիտացած արտաքին անկախ կազմակերպութեան հսկողութեամբ: Փորձ ձեռք բերելու հետ մէկտեղ, սովորողները կը պարզեն, որ կարող են վստահութիւն ձեռք բերել եւ

առաջադիմութիւն դրսեւորել ինչպէս ուսման, այնպէս էլ ընկերային շփման հարցերում:

Մենթորները բաւականութիւն կը ստանան սեփական փորձը եւ գործնական գիտելիքները կիսելու եւ նրբանկատ մօտեցում կը ցուցաբերեն դեռահասների մաքառումներին՝ միաժամանակ տեղեկանալով նոր սերնդին յուզող խնդիրներին եւ վերջինիս հետաքրքրութիւններին:

Տարաբնոյթ դասընթացները սովորողներին կ'ուսուցանեն, թէ խմբային աշխատանք, բնակցութիւններ, առաջնորդութիւն, ինքնակենսագրութիւն կազմել, հրապարակային ելոյթներ՝ ի թիւս յաջողութիւն ապահովող այլ կարեւոր միջոցների: Բացի այդ, ասպարեզի, հոգեկան առողջութեան, քաղաքացիական մասնակցութեան, նիւթական գրագիտութեան, բռնութեան կանխարգելման, վնասակար նիւթերի օգտագործման վերաբերեալ սեմինարներով անդրադարձ կ'արուի այդ հարցերին եւս: Մասնակիցները նաեւ կը ծանօթանան այնպիսի բնագաւառների ու մասնագիտութիւնների, որոնք կարող են հետաքրքրել նրանց՝ կեանքի ուղին հարթելու ճանապարհին. եւ այդ ամէնը կը ներկայացնեն տեղի համայնքի այն անդամները, որոնք տուեալ բնագաւառում յաջողութեան են հասել:

Կրթական ծրագրերի ղեկավար Նարէ Աւագեանը ծրագրին միացել է այն ժամանակ, երբ «Զովիդ-19»ի համավարակը նոր էր ծանր հարուած հասցրել Կալիֆորնիա նահանգին՝ հարկադրելով դադարեցնել առերես

կրթութիւնը եւ անցում կատարել առցանց դասընթացների: Նա նշում է, թէ հեռավար շփումներին անցնելը ինչպէս է օգնել GenNext-ի գաղափարի յաջորդ փուլի ձեւաւորմանը:

«Համավարակը ոչ միայն ազդեցութիւն ունեցաւ արդէն իսկ այս կարեւորագոյն տարիք թեւակոխած բոլոր դեռահասների, այլեւ GenNext-ի պէս ծրագրերում ներգրաւուածների կեանքի վրայ: Այդ պատճառով, առցանց հարթակի անցնելը սկզբից հարցականի տակ դրուեց: Բարեբախտաբար, մենք յաղթահարեցինք բոլոր դժուարութիւնները եւ պարզեցինք մենթորութեան արժէքը, որի համար միջանձնային շփումը կարեւորագոյն նշանակութիւն ունի, իրականում չի նսեմացում հեռավար շփումների պատճառով: Իրականում, ի յայտբերուեցին բնորոշ մի շարք առաւելութիւններ, մասնաւորապէս, երբ խօսքը գնում է այն մասին, թէ ծնողներն ինչպէս են ազատում իրենց երեխաներին GenNext-ի կենտրոն հասցնելու կամ մենթորի հետ հանդիպելու պարտականութիւնից: Այն նաեւ կամաւոր մենթորներին օգնում է ժամանակ խնայել, քանի որ վերջիններս ակնյայտօրէն խիստ զբաղուած են»:

Ծրագրի նոր ղեկավար Յուրի Ուքայեանը ամենալաւ ամփոփ ձեւակերպումն է տուել. «Երբ 12 տարեկանից բարձր երիտասարդների մեծ մասը ստանայ պատուաստումները, մենք GenNext-ի մեր հանրութեանը կ'առաջարկենք երկու աշխարհների ամենալաւ կողմերը՝ առերես շփումների հրաշքը, առցանց շփումների յարմարաւետութիւնը, ինչպէս նաեւ շփման՝ ձեզ ամենա-

AGBU  
**GENNEXT** | MENTORSHIP

**DO YOU HAVE CHILDREN WHO CAN BENEFIT FROM A PROFESSIONAL MENTOR?**

1-ON-1 MENTORSHIP | GROUP ACTIVITIES

**Apply Now**

For middle and high school students

յարմար տարբերակն ընտրելու ազատութիւնը»:

Ձեզ հետաքրքրող հարցի պատասխանը գտնելու համար այցելեք GenNext կայքէջ, որտեղ կարող էք տեղեկանալ գրանցման եւ յայտերը ներկայացնելու կարգին: Գլենդէյի միաւորուած կրթաշրջանի անձնակազմը կարող է միջին եւ աւագ դպրոցի սաներին ուղղորդել մասնակցելու GenNext-ին անվճար հիմունքներով՝ պարզապէս կայքէջում լրացնելով ձեւաթուղթը: Այցելէ՛ք [agbugennext.org](http://agbugennext.org) կամ կապուէ՛ք Նարէ Աւագեանին՝ [navagyan@agbu.org](mailto:navagyan@agbu.org) հասցեով կամ (626) 794-7942 հեռախօսահամարով:

## Թողութիւն Շնորհէնք, Բայց Ինչպէ՞ս

### ԲԱԳՐԱՏ ԷՍԴՈՒԳԵԱՆ

**Թ**ուրքիոյ քաղաքական կեանքի մէջ նոր օրակարգ մը գոյացաւ Հանրապետական Կուսակցութեան նախագահ Զեմալ Քըլըչտարօղլուի «հալալութիւն» ուզող յայտարարութենէն ետք: Բառը բնականաբար չակերտեալ գործածեցինք, քանի ան հայերէն չէ: Արեւելահայերէնի մէջ սակայն երկար ժամանակէ ի վեր սովորութիւն դարձած է գործածել «Հալալ լինի» ասացուածքը: Նոյնիսկ այդ արտայայտութիւնը գործածողներէն շատեր պատկերացում իսկ չ'ունին այդ բառի թէ ստուգաբանութեան եւ թէ իրական իմաստի մասին:

Բառը ունի կրօնաբարոյական բնոյթ իսլամ հասարակութիւններու մօտ: Մահմետականներ յուդարակորութեան ընթացքին հետեւելով իմամի հարցումին «Հալալ ըլլալ» կը գոչեն միաբերան, թողութիւն շնորհելով հանգուցեալին պարտքերուն: Բացի այդ տարածուն սովորութիւն է վերադարձը կասկածելի բոլոր ճամբորդութիւններէ առաջ մնացողներէն թողութիւն խնդրել:

Քըլըչտարօղլու այս եզրը գործածեց ակնարկելով իր ներկայացուցած կուսակցութեան անցեալին գործած մեղքերուն: Հազիւ երկու օր անց ան աւելի յստակացուց այդ մեղքերը զանազան օրինակներ թուելով: Այսպէսով շատերու համար աւելի հասկնալի դարձաւ կուսկցապետի ակնարկութիւնը: Ան կը խօսէր նոյնիսկ իր գոյութիւն չունեցած տարիներուն գործուած սխալներուն մասին: Առանց խորանալու կ'առերեսուէր աւելի քան 100 տարուայ յանցագործութիւններու հետ, որոնց միտքը յղացած էին իր կուսակցութեան նախկին անդամները: Զաղաքականութիւնը որքանով պիտի ներէ, որպէսզի ան ի կատար հասցնէ իր

այդ խոստումը: Որովհետեւ թուացած մեղքերը Թուրքիոյ Հանրապետութեան հիմնաքարերը կը կազմեն: Իսկապէս ալ իբրեւ նոր հանրապետութիւն Թուրքիոյ հիմնադրութեան եւ ապա շարունակութեան մէջ բազում են այդ մեղքերը: Չափազանցած չենք ըլլար, եթէ ըսենք թէ այդ մեղքերու հետ առերեսումը իր հետ կը բերէ նաեւ բազմաթիւ նոր հարցականներ եւ վիճելի կը դարձնէ երկրի յատուկ բոլոր ձեռքբերումները:

Սակայն հետզհետէ ալ աւելի յստակ կրնանք ըսել թէ, երկիրը հասած է այնպիսի հանգրուանի մը որմէ ետք գոյութիւնը շարունակելու համար անհրաժեշտ է նման հաշուեյարդարի մը ենթարկուիլ:

Երկու տարի վերջ Թուրքիա կը պատրաստուի դիմաւորել հիմնադրութեան դարադարձը: Նման խորհրդանշական թուականի մը ընդառաջ շատ ծանր պատասխանատուութիւն մըն է որ Քըլըչտարօղլու կը բերէ երկրի պատմութեան առջեւ: Նոյնիսկ կարելի է այս հանգրուանը աննախադէպ համարել:

Միւս կողմէ կայ ռեւի-փոյիթիք կոչուածը, այսինքն քաղաքականութեան թելադրանքները, որոնցմով հաւանական է նաեւ թէ վերոնշեալ հետեւանքը կանխատեսելով կուսակցապետը հրաժարի իր խոստումէն եւ անգամ մըն ալ չի նշէ թողութիւն խնդրելու մասին իր խօսքերը:

Վերջապէս պարտինք նշել թէ այդ կուսակցութեան շարքերուն մէջ եւ ընդհանրապէս Թուրքիոյ քաղաքական գետնի վրայ բնաւ քիչ չեն անցեալի այդ հակամարդկային արարքները մեծ ոգեւորութեամբ պաշտպանողները: Անոնց համոզմամբ Թուրքիոյ Հանրապետութեան պատմութիւնը անբիծ ու անաղարտ է եւ չունի խոստովանելի արժանի որեւէ չար գործ:

Մինչդէռ այսօրուայ համայնապատկերը դիտելով կը տեսնենք թէ Թուրքիա կաշառակերութեամբ, թմրեցուցիչի մաքսանենգութեամբ, օրինական համարարգի ոչնչացմամբ հասակով մէկ թաղուած է ցեխի մէջ: Յեիս մը՝ որմէ ազատուելու համար սրբագրութիւնը պէտք է սկսի կառուցման շրջանէն իսկ:

«Ակօս»

## Արհիապատիւ Գերերջանիկ Տէր Ռաֆայէլ-Պետրոս...

### Սկիզբը Էջ 03

Հայ Կաթողիկէ համայնքի արեւը պիտի պայծառանար Թերզեանի յաջորդ պատկառելի նորընտիր Պատրիարքով որ պիտի վայելէր նաեւ Հայ Առաքելական Եկեղեցւոյ նուիրապետութեան յարգանքը հետզհետէ փարատելով յիշեալ անպատեհութիւնները:

### Արհիարեան Աւետիս-Պետրոս 14-րդ Հայ Կաթողիկէ Պատրիարք

Ինչպէս ամէն կրօնական հաստատութիւն Հայ Կաթողիկէ Պատրիարքութիւնը եւս աքսորուեցաւ Կ. Պոլսէն եւ Զահանայապետ Պիոս ԺԱ Պապի որոշումով փոխադրուեցաւ Պէյրութ 1928 թուին: Պատերազմի տարիներուն Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան մէջ կարեւոր գործունէութիւն ցոյց տուած է Գերապայծառ Յովհաննէս Արքեպիսկոպոս Նազեան, երբ 1920 թուին հայ ազգային դատի պաշտպանութեան խնդրով Փարիզ մեկնած է Պօղոս Նուպար Փաշային գլխաւորած Ազգային Համագումարին մասնակցելու համար:

Համագումարը հիմնուած էր Ամենայն Հայոց Ս.Տ. Գեորգ Ե Կաթողիկոսէն որ Պօղոս Նուպար նշանակած էր որպէս Նախագահ Համագումարին: Նազեան Գերապայծառ 1921-էն 1928 Կ. Պոլիս մնալով հայ տարագիրներէն 3,000 հոգի Սուտանիայէն Կ.Պոլիս փոխադրել կու տար ազատելով զանոնք քեմալական կոտորածէ: Նոյնպէս 500 որբուհիներ Իտալիա կարողացած է դրկել: Նազեան յետագային Պէյրութ հաստատուելով հրատարակած է հայկական ջարդերուն վերաբերեալ իր «Յուշերը»:

1933-ին Թերզեան Պօղոս-Պետրոս 13-րդ կը վախճանէր Պէյրութի մէջ եւ իրեն կը յաջորդէր Կ. Պոլսոյ մէջ երկու անգամ պատրիարքութեան տեղապահութիւնը վարած ընտիր հոգեւորական մը՝ Աւետիս Արհիարեան եպիսկոպոսը: Իր օրով կառուցուած է Պէյրութի Պատրիարքարանի շէնքը, «*ինք ըլլալով հայ կաթողիկէ եկեղեցականութեան մէջ ամենէն յարգուած եւ համակրելի դէմքը իբրեւ մարդ, իբրեւ հոգեւորական, եւ իբրեւ հայ*», ինչպէս վկայած է Երուսաղէմի Հայոց Պատրիարք Թորգոմ Արքեպս. Գուշակեան «Սիոն» ամսագրին մէջ (1938):

Արհիարեան Գերապայծառ ծնած էր Ակն 1856-ին եւ քահանայական ձեռնադրութենէն ետք Հռոմի Լեւոնեան վարժարանի մեծաւոր կարգուած, եւ ապա եպիսկոպոս ձեռնադրուած Խարբերդի հայ կաթողիկէ համայնքին որպէս առաջնորդ՝ Սուլթան Համիտի հրամանագրով: Պատրիարք-Կաթողիկոս ընտրուած է Չմմառի եպիսկոպոսաց ժողովէն 1933-ին, ստանալով Աւետիս-Պետրոս 14-րդ Կաթողիկոս-Պատրիարք անունը: Արհիարեան Պէյրութի Էշրէֆիէ թաղի Հայ Հռոմէականաց Պատրիարքութեան նոր շէնքին բացումը կատարած է 1934 թուին ու վախճանած 1937-ին: Իրեն յաջորդած է Գրիգոր-Պետրոս 15-րդ Աղաճանեան Պատրիարքը:

### Հայ Կաթողիկէներ Կովկասի Մէջ

1910-ական թուականներուն հայ կաթողիկէներ կային Վրաստանի եւ Հայաստանի հիւսիսային շրջանին մէջ ուր թեմական միացեալ վիճակ մը հաստատած էին 1909-էն մինչեւ 1921, երբ Սովետները իջան Վրաստանի եւ Հայաստանի վրայ քայքայելով ամէն կրօնական հաստատութիւն: Իրենց վերջին ժողովրդապետը Յակոբ Ծ. Վրդ. Բազարատեան ձերբակալուելով բանտարկուած է ստալինեան հալածանքներուն սկիզբը, ուր եւ վախճանած 1936-ին: Կովկասի հայ կաթողիկոսութիւնը իր կեդրոնը ունէր Թիֆլիսի մէջ: Թիֆլիս իր շրջակայքով իրենց բացատրութեամբ կը կազմէր եօթը «*Աւագութիւններ*», իւրաքանչիւրը իր աւագ քահանայով՝ փոխան թեմակալ եպիսկոպոսի: Այն ատեն առաւելագոյնը 60,000-ի կը հասներ ընդհանուր թիւը Կովկասի հայ կաթողիկէներուն: Հիմնուելով կովկասեան փոքրիկ համայնքին վրայ, Հայ Կաթողիկէ Պատրիարքութիւնը 1991-ին Հայաստանի Հանրապետութեան վերահաստատումէն ետք վերահաստատեց նաեւ Կաթողիկէ համայնքին թեմը: Սակայն, Ամենայն Հայոց Կաթողիկոսի կեանքի վերջին տարիներուն, անհարկի եւ մեծաշռիւղ «*հրաւեր*» մըն ալ ուղղեցին կաթողիկէներուն որ խուժեն հայրենիք «*իրենց պապեանական իրաւունքները ապահովելու համար*» որ պատճառ դարձաւ Հայոց Հայրապետին Վատիկան ուղարկելու եպիսկոպոսներ դժգոհութիւնը Զահանայապետին հասցնելու: Վատիկան խստացուց իր դիրքը հայ կաթողիկէներու նկատմամբ՝ նման յայտարարութեանց վրայ երբ Հայ Եկեղեցին «*Հռոմէն բաժնուած*» կը ցուցնէին անմիտ եւ անորոշ խօսքերով:

### Սրբազան Զահանայապետներուն Պաշտօնական եւ Պատմական Այցը Ս. Էջմիածին

Անցեալի պատմութիւնը Վատիկան ինք նուիրագործեց մեր օրերուն եւ մեր աչքին առջեւ, երբ Յովհաննէս-Պօղոս Բ. եւ Ֆրանսիսկոս Սրբազան Զահանայապետները, առաջինը ըլլալով պատմութեան մէջ, ընդունեցին Ամենայն Հայոց Ս. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին հրաւերը, առաջինը 2001 թուի Սեպտեմբերին եւ Ֆրանսիսկոսներկայ Պապը 2016 թուի Յունիսին: Անոնք Մայր Աթոռ Ս. Էջմիածին եւ Հայաստան այցելեցին առաջինը շնորհաւորելու համար Հայաստանեայց Եկեղեցւոյ հիմնադրութեան 1700-ամեակը զոր դարերով աննկատ թողած էին, եւ երկրորդը հայոց ցեղասպանութեան հարիւրամեակին առիթով: Անոնք որպէս մեծոգի հոգեւոր պետեր, 21-րդ դարու արշալոյսին եկան անձամբ համբուրելու Իջման Ս. Սեդակը, բարձրանալու Էջմիածնի Սուրբ Խորանը եւ տալու իրենց շնորհաւորութիւնները: Անոնք ներկայ եղան նաեւ Երեւանի նորաշէն եւ հոյակերտ Մայր Եկեղեցւոյ մէջ ի պատիւ իրենց կատարուած պաշտամունքին՝ եւ Ծիծեռնակաբերդի Յուշահամալիրի հոգեհանգստեան:

Նորընտիր Գերերջանիկ Ռաֆայէլ-Պետրոս ԻԱ Պատրիարքը ուղիղ անձն է որպէս յիշեալ պակառելի երկու Զահանայապետներու ուղիղ շաւիղէն ընթացող բարեկրօն եւ յարգարժան հովուապետ:

## Համացանցի Վրայ

### Հայություն Տունը Քանդում Ե Զարքերի Շարքերի Պատճառով

Ֆեյսպուքից երկու կարճ գրություն են առանձնացնում այսօր, որ ճիշտ ու ճիշտ հայության պատկերն է Հայաստանում եւ Սփիւռքում:



Առաջին գրության հեղինակին չեմ ճանաչում: Գրությունը կիսել էր իմ ծանոթներից մեկը: Նաեւ չգիտեմ ինչքան ճիշտ է այն պատմական դրուագը, որի մասին վկայել է: Բայց նրա խօսքը ճիշտ է:

Երկրորդ գրությունը դոկտոր Վարդգես Դաւթեանի ակնարկն է «Թաւշեայ յեղափոխութեան» եւ իշխանութիւններում նշանակուած քատրերի կապակցութեամբ: Դոկտոր Դաւթեանը ճանաչուած հոգեբոյժ է: Նա ունի նաեւ գրական արձակ ստեղծագործութիւններ. բազմաթիւ գրքերի հեղինակ է եւ գրական իր ուրոյն ճամբան է անցնում: Առիթ կը լինի առանձին անդրադառնալու Վ. Դաւթեանի գրականութեան մասին:

Կարդանք: Հայության տունը քանդում է չարքերի շարքերի պատճառով: Այս երկու գրութիւնները վերաբերում են չարեաց մեծագոյնին:

ՌՈՒԲԻՆԱ ՕՅԱՆԵԱՆ

#### Դաւիթ Պարեանի Ֆեյսպուքեան Էջից

Նոյեմբերի 17, 2021

Սովետական KGB-ն Հարաւսլաւիայի նախագահ Տիտոյին յայտնում է, որ իր մերձակորների շարքերում դաւաճան կայ, որը հաւաքագրուած է CIA-ի կողմից եւ տալիս է մէկ ամիս ժամանակ դաւաճանին բացայայտելու համար: Անցնում է մէկ ամիս, սակայն Տիտոն չի կարողանում բացայայտել դաւաճանին եւ խնդրում է ռուսներին, որպէսզի նրանք յայտնեն դաւաճանի անունը:

Պարզում է՝ դաւաճանը իր տեղակալն է լինում: Երբ իր տեղակալի հետ Տիտոն առանձին է լինում, զենքը դնում է գլխին եւ յայտնում է, որ նա ամեն ինչից տեղեակ է: Բացայայտուելուց յետոյ՝ տեղակալը չի արդարանում, որովհետեւ ամեն ինչ պարզ էր:

Տիտոն մէկ բան է հարցնում դաւաճանից: Հարցնում է՝ թէ նրանք ինչ ցուցում են տուել իրեն:

Տեղակալը յայտնում է՝ որ իրեն ուղղակի հրամայել են տարբեր պաշտօններում նշանակել ոչ մասնագէտ մարդկանց:

\*\*\*

#### Վարդգես Դաւթեան Սիրում եմ - չեմ սիրում ...

Միշտ կարծել եմք, թէ միայն երկրաշարժն ու հրաբուխն են տարերային աղէտ. արի ու տես, որ մեզ համար յեղափոխութիւններն էլ են դառնում աղէտ. բնական տարերքի պէս անկանխատեսելի, բնական աղէտի չափ անկառավարելի: Սպասում եմք, որ յեղափոխութիւնները թարմութիւն ու առաջընթաց պիտի բերեն մեր հոգիներում, սակայն մինչ այդ, ամեն ինչի հանդէպ կոյր, ամեն ինչից խուլ միջակութեան լաւան հասցնում է ծածկելու այրուող անապատի վերածել մեր յոյսերի աշխարհը: Շատ չե՞ն արդեօք այսքան աղէտները մի սերնդի կեանքում: Տարիներ շարունակ վերելից (ասես Սիքստինեան առաստաղից) եկող բիրտ ու չարագուշակ ուղերձը – «Զբաղաքականացնել» - փաստօրէն ուղեցոյց դարձաւ նաեւ «թաւշեայ յեղափոխութեան» համար: Իսկ սոցիալական յեղափոխութիւնից երբ հանում են քաղաքական եւ հումանիստական տարրերը, տակը մնում է այն գորշ, արագահոս եւ կատաղի միջակութեան լաւան, որը սրբում է ամեն նուրբ ու լուսաւոր բան իր ճանապարհին: Բանականը, բարոյականը եւ ամենազիջաւորը - մտքի աշխատանքը չի երեւում այս բովանդակ ընթացքի մէջ: Էլի ինչ-որ թրանսցենդենտալ (վերանցական, մտացածին – իմք.) ծրագրեր են մէջտեղ բերում, որոնք աւելի շուտ բարի ցանկութիւններ են (բաժակաճառեր), քան կոնկրետ նպատակ եւ գործողութեան ուղեցոյց:

Ամենասկզբում այս ամենը եւ գնահատեցի իբրեւ թրիստոնեական ակունքների միտումնաւոր շարժում, բայց հիմա՝ ԶԷ՝ որ թրիստոնեականը հռչակում է երկու կարեւոր գաղափար - անձի ազատութիւնը եւ անձի պատասխանատւութիւնը սեփական արարքների համար: Բայց ոչ - տգէտ սնապարծութիւնն ու հեշտասեր վակխանալիան գլուխ են բարձրացնում օր-օրի : Էլի ամբողջ, Էլի խալիսը - իր մթազնած ուղեղի գրգիռներով ու պահանջներով: Ու կրկին, մտածելու ընդունակ մարդը քշում է կեանքի ետնախորշերը - իբրեւ հայկական յեղափոխութեան համար ոչ պիտանի մատերիալ (սիւրճ - իմք.)...

## ԲԱՆ ՈՒ ԳԻՐ

Արագածը երկնից իջած սիրածով, Պարիս երկիր պարիս երկինք պարիս հող, Ծիրանատուն ծիծաղներից զարթնի թող, Ամեն հայի սրտում մի շող հոգեթող:

Միասնութեան շուրջպար բռնենք միական, Լինենք ընկեր լինենք եղբայր բարեկամ, Արագածի լանջերին ծով ծովանանք, Դառնանք բարի դառնանք զօրեղ ուժ դառնանք:

Ձեռքը իմն է ձեռքը քոնն է պարը մեր, Հոգսը իմն է հոգսը քոնն է յոյսը մեր, Տարին հայի անմէկին է դարը մեր, Մուլը իմն է մուլը քոնն է լոյսը մեր:

Միասնութեան շուրջպար բռնենք միական, Հայը հային ընկեր եղբայր բարեկամ, Արագածի լանջերին ծով ծովանանք, Դառնանք բարի դառնանք զօրեղ ուժ դառնանք:

ՍԵՐԿԷՅ ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆ

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐԱՅՈՅՑ

25 2021  
ՆՈՅԵՄԲԵՐ

| Կրկ | Երկ | Երք | Չրք | Հնգ | Ուրք | Շրք |
|-----|-----|-----|-----|-----|------|-----|
|     | 1   | 2   | 3   | 4   | 5    | 6   |
| 7   | 8   | 9   | 10  | 11  | 12   | 13  |
| 14  | 15  | 16  | 17  | 18  | 19   | 20  |
| 21  | 22  | 23  | 24  | 25  | 26   | 27  |
| 28  | 29  | 30  |     |     |      |     |



ԳՐԶԱՐ ՖԵՐՄԱՆԵԱՆ  
(1899 – 1958)

«Բամակի Շարքացանը»



#### Պատմութեան Մէջ Այսօր

#### Մոնթե Մեյքոնեան

#### Սկիզբը Էջ 02

Սեպտեմբեր 1991-ին կը հասնի Արցախ, ուր ձեռք կը բերէ «ԱԼՕ» կեղծանունը: 1992-ին Վազգէն Սարգսեանի առաջարկով կը ստանձնէ Մարտունի շրջանի շտապի պետի պարտականութիւնը, ուր կարճ ժամանա-

կուան մը ընթացքին, իր անկեղծութեամբ ու մաքրութեամբ կը շահի բնակչութեան սերն ու յարգանքը: Անոր ղեկավարութեամբ Մարտունին կը դառնայ ամենէն պաշտպանուած ու ամենէն մարտունակ շրջանը: Մարտ եւ Ապրիլ 1993-ին անոր ղեկավարութեամբ կ'ազատագրուի նաեւ Զարվաճառը: 12 Յունիս 1993-ին, հետախուզական նպատակով, Մոնթե մարտական ընկերներու հետ կը մեկնի Աղտամի շրջանի Մարգիլի գիւղի մատոյցները, ուր ագրպեյճանական զրահապատ մեքենայի կրակոցէն կը զոհուի:

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ



### ԼԻԲԱՆԱՆԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Լիբանանի Տիգրանակերտի Հայրենակցական Միության անդամական ընդհանուր ժողովը, տեղի պիտի ունենայ Շաբաթ, 4 Դեկտեմբեր 2021-ին երեկոյան ժամը 6ին, Պուրճ Համուտի Հայ Կաթողիկե Մեսրոպեան բարձրագույն վարժարանի Ֆարաճեան լսարանին մեջ:

#### Օրակարգ

- Ընթացաւարտ վարչութեան երկամեայ նիւթաբարոյական գործունեութեան քննարկում:
- Նոր վարչութեան ընտրութիւն:

#### Ծանօթ

Ներկաներուն թիւը մեծամասնութիւն պիտի նկատուի երեկոյան ժամը 6:30ին:

Պէյրուօ, Լիբանան  
23 Նոյեմբեր, 2021

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

### Ախոյեանութեան Բոլոր Կարգերու Տիտղոսները Շահելէ Ետք, ՀԲԸՄ-ՀԵԸ Անդրանիկ Փինկ Փոնկի Լիբանանի Բաժակակիր



Լիբանանի փինկ փոնկի ախոյեանութեան բոլոր կարգերու տիտղոսները շահելէ ետք, ՀԵԸ Անդրանիկ Պէյրուօ շահեցաւ Լիբանանի տողոց եւ աղջիկներու անհատական բաժակները:

Լիբանանի փինկ փոնկի ֆետերասիոնին հովանաւորութեամբ, Մոն Լա Սալի մէջ կայացած բաժակի մրցաշարքին մասնակցեցան տարբեր ակումբներ ներկայացնող 189 մարզիկներ եւ 42 մարզուհիներ:

ՀԵԸ Անդրանիկ Պէյրուօն ներկայացնող Սաատետ-տին Հապաշ շահեցաւ տողոց բաժակը, աւարտականին՝ 3-2 արդիւնքով պարտութեան մատնելով Հիլալ Մըխթարը (Ֆետի Ալ Աքտաս): Աղջկանց բաժակը շահեցաւ Մարիանա Սահակեանը, աւարտականին՝ 3-0 յաղթելով իր ակումբակիցին՝ Թալիա Ազարին:




Այսպիսով, ՀԵԸ Անդրանիկ Պէյրուօ արձանագրեց իւրաքանչեւ մրցանիշ մը, միեւնոյն տարուան մէջ նուաճելով Լիբանանի փինկ փոնկի ախոյեանութեան տարբեր կարգերու եւ բաժակի տիտղոսները՝ տողոց եւ աղջիկներու:

ՀԲԸՄ-ՀԵԸ-ի համակիրներուն անունով կը շնորհաւորենք ՀԵԸ-ի մարզիկ-մարզուհիները զոյգ յաղթանակներուն առիթով:

ՀԵԸ-ի փինկ փոնկի կազմերուն մարզիչն է Մելիք Ալ Թաուիլը, վարչական պատասխանատուն՝ Սահակ Պիտինեանը:

Դաւանելով ռամկավար եւ ազատական սկզբունքներ, կը հաւատանք բազմակարծութեան եւ ազատ խօսքի իրաւունքի: Հետեւաբար՝ թերթիս մէջ հրատարակուած գրութիւնները անպայման չեն արտայայտեր խմբագրութեանս տեսակէտը: Կամքէ անկախ սպորդած վրիպակներու պարագային, կ'ապաւինինք յօդուածագիրներուն եւ մեր ընթերցողներուն ներողամտութեան:



الحلقة الأدبية الأرمنية اللبنانية

أمسية تذكيرية  
لذكرى

الاستاذ المحامي كسبار ويسروبيان

الجمعة: 10 كانون الأول 2021 الساعة السابعة مساءً  
في قاعة محاضرات جامعة هيكازيان، القنطاري - لبنان

دعوة خاصة

ملاحظة: الموقف مؤمن



ԼԻԲԱՆԱՆԻ  
ԳՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ

### ՅԱՐԳԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ՝ Մեր Գասպար Տէրտէրեանի Յիշատակին

Ուրբաթ, 10 Դեկտեմբեր 2021 երեկոյան ժամը 7-ին,  
Հայկազեան Համալսարանի սրահին մէջ, Զանթարի, Լիբանան:

Ծանօթ.- Կարաստուր տպագրուած է  
Հայ Անտ. Ա. Եկեղեցւոյ շրջաքանին մէջ

Հրատարակ